Հավելված N 2
ՀՀ կառավարության 2014 թ.
սեպտեմբերի 18-ի նիստի N 39
արձանագրային որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԱՐԵՑՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ **2015-2019** ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հ/հ	**Միջոցառման անվանումը**	**Ակնկալվող արդյունքը**	**Պատասխանատու կատարողը**	**Համակատարողը**	**Իրականացման ժամկետը**	**Ֆինանսավորման աղբյուրը**
1.	Տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտը կարգավորող օրենսդրության վերլուծություն և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ կատարելու կամ նոր իրավական ակտի ընդունման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	Ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործում և համապատասխանեցում սույն հայեցակարգի դրույթներին	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ մշակույթի նախարարություն	2015-2016թթ	Ֆինանսավորում չի պահանջում
2.	Տարեցների կարիքների և	Տարեցների կարիքների և վճարունակության	ՀՀ աշխատանքի և սոցիալական	Տեղական ինքնակառավ	2015-2016թթ	ՀՀ օրենքով չարգելված այլ

	վճարունակության աստիճանի լիարժեք և բազմակողմանի գնահատման չափորոշիչների սահմանում	աստիճանի գնահատման չափորոշիչների առկայություն	հարցերի նախարարություն	արման մարմիններ /համաձայնությամբ/, հասարակական կազմակերպություններ /համաձայնությամբ/		աղբյուրներ
3.	Տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց գնահատված կարիքներին համապատասխան սոցիալական սպասարկման և խնամքի ծառայությունների տրամադրման իրավական հիմքերի և մեթոդական հենքի ապահովում՝ իրավական ակտերի նախագծերի, կանոնակարգերի, չափորոշիչների և ծառայություններ մատուցողներին ներկայացվող պահանջների մշակում և հաստատում	Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց գնահատված կարիքներին համապատասխան ծառայությունների տրամադրման հաստատված կանոնակարգերի, չափորոշիչների և ծառայություններ մատուցողներին ներկայացվող պահանջների առկայություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Հասարակական կազմակերպություններ /համաձայնությամբ	2015-2016թթ	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ

4.	Տարեցների գնահատված կարիքներին համապատասխան ամբողջական սոցիալական ծառայությունների փաթեթի սահմանում, այդ թվում՝ տարեց անձանց պետության կողմից երաշխավորված սոցիալական ծառայությունների նվազագույն փաթեթի և լրացուցիչ ծառայությունների ցանկերի մշակում	Տարեցներին տրամադրվող սոցիալական ծառայությունների նվազագույն փաթեթի և լրացուցիչ սոցիալական ծառայությունների ցանկի առկայություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Հասարակական կազմակերպություններ /համաձայնությամբ/	2015-2016թթ	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ
5.	Հայեցակարգում ներկայացված նոր մոդելների նկատմամբ տարեցների կարիքի և պահանջարկի գնահատման իրականացում՝ հանրապետության հինգ մարզում՝ Սյունիք, Վայոց ձոր, Տավուշ, Գեղարքունիք և Արագածոտն	Տարեցների գնահատված կարիքներ և տարեցների կողմից ծառայությունների նոր մոդելների նկատմամբ հստակեցված պահանջարկի առկայություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, հասարակական կազմակերպություններ /համաձայնությամբ/	2016-2017թթ.	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ
6.	Գնահատման արդյունքում ընտրված մոդելների	5 մարզում նոր մոդելներով տարեցներին սոցիալական	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի	ՀՀ տարածքային կառավարման	2017-2018թթ	ՀՀ պետական բյուջեից միջոցների

	փորձարկում նույն 5 մարզերում	ծառայությունների տրամադրում	նախարարություն	նախարարություն, հասարակական կազմակերպություններ /համաձայնությամբ/		հատկացման հնարավորության հարցը քննարկել յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
7.	Նոր մոդելներով իրականացվող փորձնական ծրագրերի շրջանակներում տարեցներին տրամադրվող ծառայությունների մշտադիրտարկում և արդյունքների գնահատում	Գնահատված արդյունքներ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Հասարակական կազմակերպություններ /համաձայնությամբ/	2018-2019թթ	Ֆինանսավորում չի պահանջում